Այլս անասթիվ	03029406
Հախագրություն	26.01.2024թ
Խառնակազմի կազմման	12.03.2024թ



ՎՏ

Հում ապահ

Գնորդի անունը (անհատ)	Y	X	Գնումը
1	8407531.901	4400417.766	59.57
2	8407477.172	4400468.145	21.85
3	8407465.82	4400464.570	18.05
4	8407439.398	4400461.83	0.67
5	8407438.735	4400461.72	9.3
6	8407433.355	4400469.308	8.17
7	8407428.899	4400464.578	19.84
8	8407417.093	4400478.188	19.19
9	8407432.751	4400469.27	5.53
10	8407437.281	4400482.468	24.82
11	8407467.348	4400500.711	0.1
12	8407467.429	4400508.788	0.85
13	8407457.823	4400506.257	1.09
14	8407468.158	4400505.304	1.09
15	8407468.913	4400504.514	1.09
16	8407469.841	4400503.936	1.09
17	8407469.883	4400503.907	1.09
18	8407461.974	4400503.548	1.09
19	8407463.946	4400503.782	1.09
20	8407464.031	4400504.239	1.09
21	8407464.887	4400504.939	1.09
22	8407465.992	4400505.829	1.09
23	8407465.995	4400508.849	1.09
24	8407468.023	4400507.934	0.81
25	8407465.046	4400508.535	3.13
26	8407469.074	4400508.438	1.02
27	8407469.084	4400509.462	1.09
28	8407469.346	4400510.823	1.09
29	8407469.985	4400511.485	1.09
30	8407470.808	4400512.288	1.09
31	8407471.524	4400512.882	1.09
32	8407472.86	4400513.228	1.09
33	8407473.05	4400513.308	1.09
34	8407474.728	4400513.111	1.09
35	8407475.718	4400512.054	1.09
36	8407476.588	4400511.984	1.09
37	8407477.246	4400511.888	1.09
38	8407477.627	4400510.673	1.09
39	8407477.773	4400508.99	1.09
40	8407477.848	4400507.905	1.09
41	8407477.252	4400508.885	0.42
42	8407477.886	4400508.831	27.24
43	8407504.821	4400508.998	25.71
44	8407530.484	4400510.539	7.04
45	8407537.519	4400510.848	20.35
46	8407538.411	4400400.52	14.33
47	8407531.301	4400477.788	

Որպեսզի ընդունվեք որպես հաճախորդ, պետք է կատարեք հետևյալ քայլերը:

Ստորագրություն

Իրականացնողի անունը և ազգանունը

ՀՀ

Ստորագրություն

Ամսաթիվ

Կապիտալի իրավունքներ

26.01.2024թ

12.03.2024թ



U.S.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18 մարտի 2024 թվականի N 1352

**ԱՐՄԵՆ ԹԵՐԶԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ  
ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Արվյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով Արմեն Թերջանյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մարտի 12-ի N Բ-1796).

1. Արմեն Թերջանյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2024 թվականի մարտի 05-ի N 05032024-07-0197 վկայական) Արվյան համայնքի Պտղնի գյուղի 2-րդ թաղամասի թիվ 27 հասցեում գտնվող անշարժ գույքի բաժանված մասերին՝ «ԳԵՈԼԱՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի մարտի 12-ին կազմված բաժանման սխեմայի (կցվում է) համաձայն՝ տրամադրել հասցեներ՝ 250.7 քառակուսի մետր մակերեսով հատվածին՝ համայնք Արվյան, գյուղ Պտղնի, Պտղնի-2 այգետարածք, 2-րդ թաղամաս, 27/1, 258.3 քառակուսի մետր մակերեսով հատվածին՝ համայնք Արվյան, գյուղ Պտղնի, Պտղնի-2 այգետարածք, 2-րդ թաղամաս, 27:

2. Արմեն Թերջանյանը պարտավոր է Արվյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 20 000 (քսան հազար) դրամ՝ հասցեների տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Թերջանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ


2024թ. մարտի 18  
ք. Արվյան



# ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Սեփականատեր	
Կրճեն թերջանյալի հարուցիչ	

Մարզ, համայնք, հասցե  
 Հողատիրության ոլորտը



Սակերես հա	
Ծածկագիր	
Սպատակային նշանակություն	
Գործառնական նշանակություն	
<i>Ըրազդեցիչ նշումներ:</i>	

Մասշտաբ 1:500	
Որակավորում ունեցող անձ	Հրանտ Աղանյան
Որակավորման վկայականի համարը	361
Ստորագրություն	<i>[Signature]</i>
Իրավաբանական անձի անվանումը	«ԳԵՈԼԱՅՆ» ՍՊԸ
ՀՎԳԴ	02661839
Ստորագրություն	<i>[Signature]</i>
Համար	07.03.2024
Հաստատվածի կազմման	12.03.2024




# ՀԻ.ՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Ձև 1  
 Հաստատում են  
 Համայնքի ղեկավար  
 Կ.Ս.  
 ամուսնացված, հայրամուսն

Կոտայքի մարզ, Արթուրյան համայնք, գ. Պտղոսի 2-րդ թաղամասի քիվ  
 Մարզ, հասցեյք, հասցե  
 Դրամատարկացման օրինակ

Սեփականատեր  
 Արմեն Թերջանյան Հարությունի



Սակերես հա	0.02507	Սաաշտար 1:500
Ծածկագիր	07-054-0128-0010	Հրամտ Աղանյան
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի	Հրամտ 361 Շ
Գործարձակման նշանակություն	Բնակելի կառուցապատման	«ԳԵՈԼԱՎՅԱ» ՍՊԸ
<i>Ըրագրագիչ նշումներ:</i>		02661839
1	4459146,4305	8465669,2313
2	4459164,8716	8465662,0218
3	4459170,8455	8465672,3119
4	4459153,6565	8465681,1433
1	4459146,4305	8465669,2313
Գծային չափեր	19,80	Հարավարձանական անձի անվանումը
	11,90	ՀԳԲԳ
	19,32	Ստորագրություն
	13,93	ամիս հատվածի կազմման
		07.03.2024
		12.03.2024



1. Բնակելի տուն

Շրջափակում (դրամ)	Կողովի համարներ		Գծային չափեր
	X	Y	
1	4459150,4246	8465672,6854	13,10
2	4459162,0767	8465666,6988	7,40
3	4459165,4584	8465673,2808	12,00
4	4459154,7848	8465678,7648	5,20
5	4459152,4084	8465674,1395	1,10
6	4459151,4300	8465674,6422	2,20
1	4459150,4246	8465672,6854	

Սաաշտար 1:500	
Որակավորում ունեցող անձ	Հրատն Աղանյան
Որակավորման վկայականի համարը	3614
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	«ԳԵՆԼԼԻՆ» ՍՊԸ
ՀՎԴՀ	02661839
Ստորագրություն	
Հափազրության ամիս	07.03.2024
Հատակագծի կազմման ամիս	12.03.2024



# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ


Ձև 3

Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, գ. Պտղնի 2-րդ թաղամաս թիվ

Մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր

Արմեն Թերջանյան Հարությունի



1.Բնակելի տուն

D=0.4

d=0.2-0.10

h=3.0

Լրագրության նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ		Հրանտ Աղանյան
Որակավորման վկայականի համարը		361
Ստորագրություն		<i>[Signature]</i>
Իրավաբանական անձի անվանումը		«ԳԵՈՒԼՅՆ» ՍՊԸ
ՀՎՀՀ		02661839
Ստորագրություն		<i>[Signature]</i>
ամիս ամսաթիվ	չափագրության	07.03.2024
	հատակագծի կազմման	12.03.2024

Կ.Տ.



# ՀԻ ՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԿԻԾ

Ձև 1

Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Գ. Պետրոսի 2-րդ թաղամաս թիվ

Մարզ, համայնք, հասցե

Դրոշմատվածության դիտքը

Հաստատում են

Համայնքի ղեկավար

Կ.Տ.


ամուն, ազգանուն, հայրանուն

3. Պարիսպ

L = 42.09

D = 0.2

H = 2.0



2. Պարիսպ

L = 18.93

D = 0.1

H = 2.0

Մակերես հա	0.02583
Ծածկագիր	07-054-0128-0010
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործարանական նշանակություն	Բնակելի կառուցավայր
<i>Լրացուցիչ նշումներ.</i>	

Գծային չափեր	Կոորդինատները	
	X	Y
19,32	4459153,6565	8465681,1433
13,10	4459170,8455	8465672,3119
19,03	4459177,4235	8465683,6425
13,87	4459160,8492	8465693,0003
	4459153,6565	8465681,1433

Մասշտաբ 1:500

Որակավորում ունեցող անձ	Հրանտ Աղամյան
Որակավորման վկայականի համարը	361
Ստորագրություն	<i>[Signature]</i>
Իրավաբանական անձի անվանումը	«ԳԵՂԱՅԵՆ» ՍՊԸ
ՀՎԻՄ	02661839
Ստորագրություն	<i>[Signature]</i>
ամիս	07.03.2024
կանաչիկ	12.03.2024
հաստակագրի կազմման	



Սկզբի (դրոշիվ) ԾԻ ԽՈՎՄՈՒՄՆՁՆԸ	1. Կլեյի տուն		Գծային չափեր
	Կոորդինատները		
	X	Y	
1	4459156,6536	8465680,8401	12,00
2	4459167,3272	8465675,3562	7,40
3	4459170,7090	8465681,9383	13,10
4	4459159,0569	8465687,9249	2,20
5	4459158,0515	8465685,9681	1,10
6	4459159,0300	8465685,4654	5,20
1	4459156,6536	8465680,8401	

Մասշտաբ 1:500	
Որակավորում ունեցող անձ	Հրանտ Արամյան
Որակավորման վկայականի համարը	361
Ստորագրություն	<i>[Ստորագրություն]</i>
Իրավաբանական անձի անվանումը	«ԳԵՈԼԻՆԵ» ՍՊԸ
ՀՎԻԴ	02661839
Ստորագրություն	<i>[Ստորագրություն]</i>
ամիս	07.03.2024
ամսաթիվ	հատակագծի կազմման
	12.03.2024



# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ


Ձև 3

Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, գ. Պտղի 2-րդ թաղամաս թիվ

Սարգ, համայնք, հասցե

Սեփականատեր

Արմեն Թերջանյան Հարուսթյունի



2.Բնակելի տու  
D=0.4  
d=0.2-0.10  
h=3.0

Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ		Հրանտ Աղանյան
Որակավորման վկայականի համարը		361
Ստորագրություն		<i>Handwritten signature</i>
Իրավաբանական անձի անվանումը		«ԳԵՈՒՅՆ» ՍՊԸ
ՀՎՀՀ		02661839
Ստորագրություն		<i>Handwritten signature</i>
ամիս ամսաթիվ	չափագրության	07.03.2024
	հատակագծի կազմման	12.03.2024



Կ.Տ.






Սարգ, համայնք, հասցե

Սեփականատեր

Արմեն Թերջանյան Հարույթյուն



1.Բնակելի տուն  
 D=0.4  
 d=0.2-0.10  
 h=3.0

Բաժանվող մաս 1  
 S=73.77 քմ

Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100


Որակավորում ունեցող անձ	Հրանտ Աղամյան
Որակավորման վկայականի համարը	361
Ստորագրություն	<i>[Signature]</i>
Իրավաբանական անձի անվանումը	«ԳԵՈՒԼԻՅՆ» ՍՊԸ
ՀՎՀՀ	02661839
Ստորագրություն	<i>[Signature]</i>
անիս ամսաթիվ	չափագրության 07.03.2024
	հատակագծի կազմման 12.03.2024

Կ.Տ.

Սարգ, համայնք, հասցե

Սեփականատեր

Արմեն Թերջանյան Հարությունի



2.Բնակելի տու.  
D=0.4  
d=0.2-0.10  
h=3.0

Բաժանվող մաս 2  
S=73.77 քմ

Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ		Հրանտ Աղանյան
Որակավորման վկայականի համարը		361
Ստորագրություն		<i>[Signature]</i>
Իրավաբանական անձի անվանումը		«ԳԵՌԱՅՆ» ՍՊԸ
ՀՎՀՀ		02661839
Ստորագրություն		<i>[Signature]</i>
ամիս	չափազրության	07.03.2024
ամսաթիվ	հատակագծի կազմման	12.03.2024



Կ.Տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18 մարտի 2024 թվականի N 1353

**ԱԻԴԱ ԾՈՎՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՊԱՐՄՊԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ  
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, ԱրոՎյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 198-Ն որոշման, հաշվի առնելով Աիդա Ծովյանի լիազորած անձ Աշոտ Համբարձումյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մարտի 12-ի N Բ-1812).

1. Ձևակերպել կառուցապատող Աիդա Ծովյանի կողմից իրականացված ԱրոՎյան համայնքի ԱրոՎյան քաղաքի 3-րդ փողոցի թիվ 2/3 հասցեում գտնվող բնակելի տան և պարսպի կառուցման շահագործման թույլտվությունը (շահագործման թույլտվությունը կցվում է):
2. Աիդա Ծովյանը պարտավոր է ԱրոՎյանի համայնքապետարանի 900105201355 հաշվեհամարին մուծել 14 000 (տասնչորս հազար) դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվություն տրամադրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2024թ. մարտի 18  
ք. ԱրոՎյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ԱԲՈՎՅԱՆ  
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)

N 79 «18» մարտի 2024թ.

Կառուցապատող Աիդա Ծովյանի հեռ. +374 94933700 կողմից  
(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,  
հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

կառուցված բնակելի տուն և պարիսպ  
(օբյեկտի անվանումը)

որը գտնվում է Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, քաղաք Աբովյան, 3-րդ փողոց  
թիվ 2/3 հասցեում՝

(օբյեկտի տեղադրությունը, հասցեն)

համարվում է ավարտված և պատրաստ է շահագործման, որի՝

1. նախագծային փաստաթղթերը մշակվել են «ՄԻԴԻՍ ԱՐՔԻԹԵՔԹՍ» ՍՊԸ-ի կողմից  
Արտոնագիր՝ ՃԲԴ-Ա-0108, ԿԱԴ-Ա1-029

(նախագծային կազմակերպության անվանումն օրենքով սահմանված դեպքերում՝ լիցենզիայի համարը,  
անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, լիցենզիայի համարը)

2. շինարարությունն սկսվել է Աբովյան համայնքի ղեկավարի կողմից

(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

Տրված «07» դեկտեմբերի 2021 թ. N 152 շինարարության թույլտվության համաձայն.

3. շինարարությունն իրականացվել է սեփականատիրոջ կողմից

(գլխավոր կապալառուի անվանումը)

4. օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ երկհարկանի բնակելի տուն և պարիսպ

5. հատուկ պայմանները ոչ էական շեղումներով

ՀԻՄՔԵՐ՝

1) կառուցապատողի դիմումը «12» մարտի 2024 թ.

2) ընդունող հանձնաժողովի ակտը «11» մարտի 2024թ.

3) կատարողական փաստաթղթերի ցանկը կամ շինության տեխնիկական վիճակի մասին  
համապատասխան հետազննության դրական եզրակացությունը 4 թերթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

«18» մարտի 2024թ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մարտի 2024 թվականի N 1354

ՄԻՍԱԿ ԵՎ ՄԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՐԿՀԱՐԿԱՆԻ  
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ԼՈՂԱՎԱԶԱՆԻ ԵՎ ՊԱՐՍՊԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Արմավյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 198-Ն որոշման, հաշվի առնելով Միսակ Գրիգորյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մարտի 12-ի N Բ-1784)։

- Ձևակերպել կառուցապատողներ Միսակ և Մանե Գրիգորյանների կողմից իրականացված Արմավյան համայնքի Պտղնի գյուղի 2-րդ այգետարածքի 6-րդ թաղամասի թիվ 22 հասցեում գտնվող երկհարկանի բնակելի տան, լողավազանի և պարսպի կառուցման շահագործման թույլտվությունը (շահագործման թույլտվությունը կցվում է)։
- Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են Արմավյանի համայնքապետարանի 900105201355 հաշվեհամարին մուծել 14 000 (տասնչորս հազար) դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվություն տրամադրելու համար։
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. մարտի 18  
ք. Արմավյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ԱՐՈՎՅԱՆ  
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ)

N 80 «18» մարտի 2024թ.

Կառուցապատող Միսակ և Մանե Գրիգորյաններ հեռ. +374 44797477 կողմից  
(իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,  
հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

կառուցված երկհարկանի բնակելի տուն, լողավազան և պարիսպ  
(օբյեկտի անվանումը)

որը գտնվում է Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, գյուղ Պտղնի, 2-րդ այգետարածք,  
6-րդ թաղամաս, թիվ 22 հասցեում՝

(օբյեկտի տեղագրությունը, հասցեն)

համարվում է ավարտված և պատրաստ է շահագործման, որի՝

1. նախագծային փաստաթղթերը մշակվել են «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից  
Արտոնագիր՝ ՃԲԴ-Ա-085, N ԿԵԴ-Ա2-007

(նախագծային կազմակերպության անվանումն օրենքով սահմանված դեպքերում՝ լիցենզիայի համարը,  
անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, լիցենզիայի համարը)

2. շինարարությունն սկսվել է Պտղնի համայնքի ղեկավարի կողմից

(շինարարության թույլտվություն տվող մարմնի անվանումը)

Տրված «18» հունիսի 2021 թ. N 26 շինարարության թույլտվության համաձայն.

3. շինարարությունն իրականացվել է սեփականատերերի կողմից

(գլխավոր կապալառուի անվանումը)

4. օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ երկհարկանի բնակելի տուն, լողավազան և պարիսպ

5. հատուկ պայմանները ոչ էական շեղումներով

ՀԻՄՔԵՐ՝

1) կառուցապատողի դիմումը «12» մարտի 2024 թ.

2) ընդունող հանձնաժողովի ակտը «11» մարտի 2024թ.

3) կատարողական փաստաթղթերի ցանկը կամ շինության տեխնիկական վիճակի մասին  
համապատասխան հետազննության դրական եզրակացությունը 4 թերթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

«18» մարտի 2024թ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18 մարտի 2024 թվականի N 1355

**ԱՐՄԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Արմինե Մկրտչյանի հայտը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 29-ի N Բ-1516)։

1. Արմինե Մկրտչյանին տալ բնակելի տան և պարսպի կառուցման նախագծման թույլտվություն (նախագծման թույլտվությունը կցվում է)։
2. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմինե Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. մարտի 18  
ք. Արովյան







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱԵՆՔ**  
**ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ**  
 (ՃԱՐՏԱՐԱԴԵՏԱՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱՂԻՆՔ)

**N 193 «18» մարտի 2024թ.**

<b>Օբյեկտ</b>	<b>Քանկեյի տան և պարսպի կառուցում</b> <small>(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերակազմում, գործառնական նշանակության փոփոխություն)</small>
	<b>«Աշխատանքային նախագիծ» (միջին ռիսկայնության, II կատեգորիա)</b> <span style="float:right">Ճարտագծային փաստաթղթերի մշակման համար</span>
	<small>(հակիրճ բնորոշումը, եզրությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)</small>
<b>Գտնվելու վայրը</b>	<b>ՀՀ, Գոտայքի մարզ, համայնք Արտվյան, ք. Արտվյան Հատիսի 2-րդ թաղամաս 102/2, ծածկագիր՝ 07-002-0036-0708</b> <small>(մարզի, համայնքի, փողոցի անվանումները շենքի համարը, հողամասի ծածկագիրը)</small>
<b>Կառուցապատող</b>	<b>Արմինե Մկրտչյան (ՀՀ, ք.Արտվյան 2-րդ փող. 40, հեռ. +37494080023)</b> <small>(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)</small>
<b>Առաջադրանքի տրամադրման հիմքը</b>	<b>Կառուցապատողի հայտը, անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման վկայականը, էսքիզային նախագիծը</b> <small>(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)</small>
<b>Առաջադրանքի գործողության ժամկետը</b>	<b>Մեկ տարի</b> <small>(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետին համապատասխան)</small>

**Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Մ Ա Մ Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր Ը**

(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

<b>1. Հողամասը գտնվում է</b>	<b>նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման</b> <small>(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)</small>
<b>2. (*) Հողամասի չափերը</b>	<b>0,017 հա</b> <small>(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմար, մակերեսը, (հա)</small>
<b>3. Հողամասի առկա վիճակը</b>	<b>Հողամասը ծանրաբեռնված չէ</b> <small>(անիմբի բնութագիրը, շենքերի (այլ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, նարկայնությունը, շինարարական կուրթերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)</small>
<b>4. (*) Տրանսպորտային պայմանները</b>	<b>ներհամայնքային նշանակության ճանապարհ</b> <small>(ճամաարների անվանումները, երկաթուղային արտակարգ մոտեցումները և այլն)</small>
<b>5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ</b>	<b>Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցողիներ:</b> <small>(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)</small>
<b>6. (*) Կից հողամասեր</b>	<b>Հարևանությամբ գտնվող բնակելի տներ, հողամասեր և տարածքներ</b> <small>(կից հողագազարծուները անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)</small>
<b>7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)</b>	<b>Առկա չեն</b> <small>(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)</small>
<b>8. (*) Հատակագծային սահմանափակումներ</b>	<b>Հաշվի առնել կից տարածքներում առկա և նախատեսվող կառուցապատումը</b> <small>(անգանբում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներաարտադրատային ներառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այլ թվում՝ սերվիտուտները)</small>

**Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Ա Մ Ա Մ Ի Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր Ը**

(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

<b>9. Ծարտարարայն տեսակապակագծային պահանջներ</b>	<b>Մշակել նախագիծ՝ համայնք Արտվյան, ք. Արտվյան Հատիսի 2-րդ թաղամաս 102/2 հասցեում գտնվող հողամասում՝ բնակելի տան և պարսպի կառուցում՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականով տրված հողամասի սահմաններում:</b> <small>(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվադեյի սեփական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներ, իրց կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գույնային լուծումների վերաբերյալ)</small>
<b>9.1. (*) Օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)</b>	<b>քստ նորմերի</b>
<b>9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)</b>	<b>քստ նորմերի</b>
<b>9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)</b>	<b>մինչև 8,0 մ</b> <small>(սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ԳՀԸ 20.04-երկրաշարժադիմացկուն շինարարություն, Նախագծման նորմեր 2 շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն))</small>
<b>9.4. կառուցապատման խտության գործակիցը</b>	<b>քստ նորմերի</b> <small>(կառուցի (կառուցների) ընդհանուր մակերեսի նարարելությունը հողամասի մակերեսին)</small>
<b>9.5. կառուցապատման տոկոսը</b>	<b>մինչև 40 %</b> <small>(կառուցապատվող (ամբողջական) տարածքի նարարելությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)</small>
<b>9.6. կանաչապատման տոկոսը</b>	<b>60 % և ավելի</b> <small>(կանաչապատ տարածքի նարարելությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)</small>

- 9.7. այլ պահանջներ**
- **Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով նորմատիվային պահանջները**
  - **Համաձայն Արտվյան համայնքի ավագանու 06.12.2022թ. N 174-Ա որոշման՝ շինությունների արտաքին պատերի համար նախատեսել սպիտակ, մոխրագույն, ծիրանագույն երանգները, կապտականաչ հայելային ապակիները, իսկ տանիքների համար՝ շագանակագույն և մուգ կապտականաչ երանգները**

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

Առկա չէ

11. Մտորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Համաձայն նորմերի

12. (\*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (\*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում

Համաձայն նորմերի

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (\*) էլեկտրամատակարարում

Համաձայն նորմերի

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (\*) գազամատակարարում

Համաձայն նորմերի

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (\*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադրիչը

Համաձայն նորմերի

(համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

Առկա չեն

12.6. աղբահանություն

համայնքային

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

Կազմակերպել տարածքի ջրահեռացում:

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

Ազատ տարածք բարեկարգել և կանաչապատել

(կանուխապային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գուլագո և այլն)

15. Շինարարական նյութեր

Երկաթբետոնե տարրեր, քարե շար, ապակի, մետաղական տարրեր:

(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դրների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

Հստ նախագծի

(արտակարգ իրավիճակներում մարդկանց օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

Ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները

(հակահրդեհային տնվառնություն սպասարկման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաչափ խմբերի պաշտպանության միջոցառումներ

19. Երջակա միջավայրի պահպանում

Ապահովել ջրջակա միջավայրի պահպանման համապատասխան միջոցառումները

(ջրջակա միջավայրը վնասվածք ազդեցությունից քսցատելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Հստ նորմերի

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և արանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

մեկ տարի, ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ. հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

(Նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

Լ Ը Ա Ց Ո Ւ Ց Ի Չ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ը Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծուի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

չի պահանջվում

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրծող մարմինների հետ էսթիպային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

Նորմերի համաձայն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումներ

- Մինչև նախագծային աշխատանքները սկսելը համաձայնություն ձեռք բերել տվյալ ինժեներական ենթակառուցվածքների սեփականատերերի (օգտագործողների) հետ
- Համաձայնեցում հարևան հողամասի սեփականատեր(երի) (օգտագործող(ներին)) հետ

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

չի պահանջվում

27. Այլ պայմաններ

- Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առնիթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:
- Շինությունը նախագծել 22.05.2023թ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանով հաստատված դրույթներին համապատասխան:
- Նախագիծը ներկայացնել համաձայնեցման երկու օրինակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԹՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԷՂՈՒԱԿԴ ԲԱԲԱՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ԷԼ-34

«18» մարտի 2024թ.

Տրված է կառուցապատող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՅԵՐ» ՓԲԸ -ին՝

իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման

ՀՀ Կոտայքի մարզ, Արովյան համայնք ք. Արովյան Գեղարդի փողոց թիվ 5/13

0.22 կՎ հզորությամբ էլեկտրամատակարարման օբյեկտի

(օբյեկտի անվանումը, հակիրճ ընտրագիրը, հիմնական ցուցանիշները)

կառուցման արդիականացման աշխատանքների կատարման համար:

1. Գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (արդիականացման) հետագիծ-նախագծային փաստաթղթերը մշակվել են «Աշխատանքային նախագիծ»

(նախագծային փաստաթղթերի փուլը,

«ՎՈՒՆՈՍ նախագծային ինստիտուտ» ՓԲԸ կողմից:

նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 12 ամսվա ընթացքում:

(ընել շինարարության նորմատիվային տևողությունը)

3. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԲԱԲԱՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մարտի 2024 թվականի N 1357

ՄՈՒՇԵՂ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ  
ԲԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Արմյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով Մուշեղ Մարգարյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մարտի 13-ի N Բ-1820)։

1. Մուշեղ Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2005 թվականի հունիսի 02-ի N 10012024-07-0077 վկայական) Արմյան համայնքի Առինջ գյուղի Պ. Դուրյան թաղամասի 7-րդ փողոցի թիվ 11 հասցեում գտնվող հողամասի բաժանված մասերին՝ «Վալերիկ Գալստյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2024 թվականի մարտի 13-ին կազմված բաժանման սխեմայի (կցվում է) համաձայն՝ տրամադրել հասցեներ՝ 1-ին առանձնացվող հատվածին (500.0 քառակուսի մետր մակերես)՝ համայնք Արմյան, գյուղ Առինջ, Պ. Դուրյան թաղամաս, 7-րդ փողոց, 11, 2-րդ առանձնացվող հատվածին (500.0 քառակուսի մետր մակերես)՝ համայնք Արմյան, գյուղ Առինջ, Պ. Դուրյան թաղամաս, 7-րդ փողոց, 11/1:

2. Մուշեղ Մարգարյանը պարտավոր է Արմյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 20 000 (քսան հազար) դրամ՝ հասցեների տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մուշեղ Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. մարտի 18  
ք. Արմյան


# Հողատար ԲԱԺԱՆԱԿ ՍԽԵՄԱ

Կոտայքի մարզ, Արուսյան համայնք, Առինջ գյուղ Պ. Դուրյան թաղամասի 7-րդ փողոց թիվ 11

Մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր

Մուշեղ Մարգարյան



Առանձնացվող հատված 1  
0.0500 հա

Առանձնացվող հատված 2  
0.0500 հա

Մակերես հա	0.1000 հա	Մասշտաբ 1:500
Ծածկագիր	07-011-0965-0011	Վալերիկ Գալստյան
Նպատակային նշանակություն	բնակավայրերի	054
Գործարանական նշանակություն	բնակելի կառուցապատման	ԱՇ Վալերիկ Գալստյան
<i>Լրացուցիչ նշումներ.</i>		
ՔվԳԳ	25326426	25326426
Ստորագրություն	Վալերիկ Գալստյան	Վալերիկ Գալստյան
ամիս	հատվածի	հատվածի
անմաթիվ	կազմման	կազմման
չավագրության	07.03.2024 թ.	07.03.2024 թ.
հատվածի	13.03.2024 թ.	13.03.2024 թ.



# ՀՈՒՍԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Սեփականատեր

Մուշեղ Մարգարյան

Կոտայքի մարզ, Արուսյան համայնք, Առինջ գյուղ

Սարգ, համայնք, հասցե


Քիվ 10012024-07-0077 վկայական

Հողատարածքային հիմք

Հաստատում են

Համայնքի ղեկավար

Էդուարդ Բաբայան  
ամուսն. ազգանուն, հայրանուն



Մակերես հա	0.0500 հա
Ծածկագիր	07-011-0965-0011-ից
Սպատակային նշանակություն	բնակավայրերի
Գործառնական նշանակություն	բնակելի կառուցապատման
<i>Լրացուցիչ նշումներ.</i>	

Շրջափարձային (բնկման) կետեր	Հողամասի կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	8465428.758	4453437.605	12.49
2	8465435.957	4453447.815	40.05
3	8465468.664	4453424.695	12.48
4	8465461.467	4453414.504	40.04

Որակավորում ունեցող անձ	Սասնաշուր 1:500
Որակավորման վկայականի համարը	Վալերիկ Գալստյան
Ստորագրություն	054
Իրավաբանական անձի անվանումը	Այլ վալերիկ Գալստյան
ՀՎԴԴ	25326426
Ստորագրություն	25326426
ամիս	հավաքության
ամսաթիվ	հատակագծի կազմման
	07.03.2024 թ.
	13.03.2024 թ.



# ՀՈՒՍԱՍՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Մեխավաճառներ

Մուշեղ Մարգարյան

Կոտայքի մարզ, Արտյան համայնք, Առինջ գյուղ


Մարզ, համայնք, հասցե

Քիվ 10012024-07-0077 վկայական

Հողատիրական հիմք

Հաստատում են	13.03.2024թ.
Համայնքի ղեկավար	Կ.Տ.
Էրուարտ Բարսեղյան	
ամուսն, ազգանուն, հայրանուն	

Մարզ, համայնք, հասցե	Կոտայքի մարզ, Արտյան համայնք, Առինջ գյուղ
Քիվ 10012024-07-0077 վկայական	
Հողատիրական հիմք	



Սակերես հա	0.0500 հա
Ծածկագիր	07-011-0965-0011-ից
Նպատակային նշանակություն	բնակավայրերի
Գործառնական նշանակություն	բնակելի կառուցապատման
<i>Լրացուցիչ նշումներ.</i>	

Շրջադարձային կետեր	Հողամասի Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	8465421.558	4453427.395	12.49
2	8465428.758	4453437.605	40.04
3	8465461.467	4453414.504	12.48
4	8465454.267	4453404.308	40.04
1	8465421.558	4453427.395	40.04

Մասշտաբ	1:500	
Որակավորում ունեցող անձ	Վալերիկ Գալստյան	
Որակավորման վկայականի համարը	054	
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը	ԱՉ Վալերիկ Գալստյան	
ՀՎԳԴ	25326426	
Ստորագրություն		
ամիս	Հափազրություն	07.03.2024 թ.
ամսաթիվ	հաստակագրի կազմման	13.03.2024 թ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մարտի 2024 թվականի N 1358

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 3-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ ԹԻՎ 22Բ ՇԵՆՔԻ  
ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ  
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն, N 912-Ն և 2007 թվականի օգոստոսի 09-ի N 1036-Ն որոշումների, հաշվի առնելով Վահե Զարգարյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 16-ի N Բ-1111)։

1. Արվյան համայնքի Արվյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի թիվ 22Բ շենքի հարևանությամբ գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 20.2 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնական կառուցված 20.2 քառակուսի մետր արտաքին և 17.6 ներքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը համարել Արվյան համայնքի սեփականություն և ճանաչել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023VZFJLK)։

- 2. Ընդունել ի գիտություն, որ՝
  - 1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը։
  - 2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում։
  - 3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք։

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված ավտոտնակի և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է)։

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Արվյան, քաղաք Արվյան, 3-րդ միկրոշրջան, 3/329 ավտոտնակ։

5. Սույն որոշումն՝ ընդունման օրվանից 5-օրյա ժամկետում, տրամադրել անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը։

6. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնական կառույցն իրականացրած Վահե Զարգարյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին։

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Է. ԲԱՐԱՅԱՆ  




# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ


Մարզ Կոտայքի, համայնք Արուվյան, Արուվյան ք.

Մարզ, համայնք, հասցե

Սեփականատեր

Վահե Զարգարյան

## 1. Ավտոտնակ



H=2.70  
h=2.40  
D=0.20

$S_{\text{Արտ.}}=20.2$

Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:100

Որակավորում ունեցող անձ	Վահրամ Ահարոնյան
Որակավորման վկայականի համարը	0484
Ստորագրություն	<i>[Signature]</i>
Իրավաբանական անձի անվանումը	<<ԳԵՈԹԵԲ>> ՍՊԸ
ՀՎՀՀ	03572682
Ստորագրություն	<i>[Signature]</i>
ամիս, չափագրություն	27.12.2023թ.
ամսաթիվ, հատակագծի կազմման	28.12.2023թ.



# ՀՈՂԱՄԱՄԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Մարզ Կոտայքի, համայնք Արփլան, Արփլան բ.


Մարզ, համայնք, հասցե

Հորիզոնական սիմբոլ

Հաստատում էմ / 28.12.2023թ.

Համայնքի ղեկավար


անուն, ազգանուն, հայրանուն



Մակերես	հա	0.00202
Ծածկագիր		07-002-0058-0001.0051-ից
Նպատակային նշանակություն		Բնակավայրերի
Կործանողական նշանակություն		Բնակելի կառուցապատում
<u>Լրացուցիչ նշումներ.</u>		

Մասշտաբ 1:200	
Որակավորում ունեցող անձ	Վահրամ Ահարոնյան
Որակավորման վկայականի համարը	0484
Ստորագրություն	<i>[Signature]</i>
Իրավաբանական անձի անվանումը	Հ.Վ.Հ.
Տնօրագրություն	03572682
ամիս, չափագրություն	27.12.2023թ.
ամսաթիվ հաստատվածի կազմման	28.12.2023թ.
Կ.Տ.	





## ՀԱՇՎԱՌՄԱՆ (ՉԱՓԱԳՐՄԱՆ) ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒՏՔԱԳՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

1. Սեփականատեր(ա.ա.հ)

ՎԱՀԵ ՉԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՅԿԱՄԱՐԻ

2. Հասցե

3. Հիմնական միավոր

4. Չափագրված հողամասի

Կադաստրային ծածկագիր- 07-002-0058-0051

5. Որակավորում ունեցող անձ(ա.ա.հ)

ՎԱՀՐԱՄ ԱՀԱՐՈՆՅԱՆ ՄՀԵՐԻ

6. Որակավորման վկայականի համար, տրման ամիս, ամսաթիվ

0484 2023-11-13

7. Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր

2023VZFLK



8. Մուտքագրման ամիս, ամսաթիվ

2023-12-28 23:12:45





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԹՎԱՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մարտի 2024 թվականի N 1359

ԱՐԹՎԱՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-023-0015-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ  
ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՋՈՒԳԱՐԱՆԸ, ԹՈՆՐԱՏՈՒՆԸ, ԽՈՐԴԱՆՑԸ,  
ՀԱՎԱՔՈՒՆԸ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՐԻՄՊՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, Արթվյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակելի տունը, զուգարանը, թոնրատունը, խորդանոցը, հավաքունը, օժանդակ շինությունը և պարիսպը կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Արման Եղիազարյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 22 ի N Բ-1276)։

1. Արման Գնելի Եղիազարյանին, Գնել Ալբերտի Եղիազարյանին, Լիլիթ Գնելի Եղիազարյանին, Արկադի Գնելի Եղիազարյանին և Սիլվա Արշավիրի Եղիազարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2004 թվականի դեկտեմբերի 29-ի N 0320763 վկայական) Արթվյան համայնքի Գեղաշեն գյուղում գտնվող 07-023-0015-0016 կադաստրային ծածկագրով 1200 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 244,0 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 4,4 քառակուսի մետր արտաքին մակերեսով զուգարանը, 33,6 քառակուսի մետր արտաքին մակերեսով թոնրատունը, 26,5 քառակուսի մետր արտաքին մակերեսով խորդանոցը, 16,7 քառակուսի մետր արտաքին մակերեսով հավաքունը, 46,0 քառակուսի մետր արտաքին մակերեսով օժանդակ շինությունը և 0,50 քառակուսի մետր մակերեսով պարիսպը համարել օրինական (Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023K8MDLZ)։

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Արթվյան, գյուղ Գեղաշեն, 3-րդ, թաղամասի 4-րդ փողոց, թիվ 8։

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են՝  
1) Արթվյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար։

2) ինքնակամ կառուցված բնակելի տան, զուգարանի, թոնրատան, խորդանոցի, հավաքնի, օժանդակ շինության և պարսպի օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Արթվյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին վճարել 386 977 (երեք հարյուր ութսունվեց հազար ինը հարյուր յոթանասունյոթ) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած։

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ  Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. մարտի 18  
ք. Արթվյան



# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Սեփականատեր  
 Գնել Եղիազարյան  
 Սիլվա Եղիազարյան  
 Լիլիթ Եղիազարյան  
 Արման Եղիազարյան  
 Արվաթի Եղիազարյան

Կոտայքի մարզ Արուսյան համայնք, գ. Գեղաշեն  
 մարզ համայնք հասցե

Սեփականության վկայական N 0320763

Իրականացնում էինք


Ձև 1

Հաստատում են

Հանայնքի ղեկավար

Կ.Տ.


անո՞ն և ազգանուն, հայրանուն



Մակերես հա	0.1200
Ծածկագիր	07-023-0015-0016
Նպատակային նշանակություն	բնակավայրերի
Գործարական նշանակություն	բն. կառ.
Լրացուցիչ նշումներ.	

Այլուցի ցուցիչի ցուցման համար	Հողատար		Թափանցիմ (մ <sup>2</sup> )
	Y	X	
1	8476313.9983	4455683.9616	12.61
2	8476312.3371	4455696.4585	26.36
3	8476309.1569	4455722.6252	41.00
4	8476350.0699	4455719.9669	11.26
5	8476347.7115	4455708.9592	18.98
6	8476343.3963	4455690.4787	30.11
1	8476313.9983	4455683.9616	

Սառչտար 1:500	Մասնավոր նունցող անձ	Մանվել Եղիազարյան
Որակավորում ունեցող անձ	Որակավորման վկայականի համար	046
Ստորագրություն	Ստորագրություն	Վ.Ա.Ա.
Իրավաբանական անձի անվանումը	ՀԿՀՀ	«ԳԻՍ-ԱՊԵՏ» ԿՈՐԻ
Ստորագրություն	Ստորագրություն	03532849
անձի անվանումը	Վճարողության	20.12.2023
Իստակագրի կազմման	Իստակագրի կազմման	20.12.2023








Կոտայքի մարզ Արվյան համայնք, գ. Գեղաշեն

մարզ. համայնք. հասցե

Սեփականատեր

Գնել Եղիազարյան, Սիլվա Եղիազարյան, Լիլիթ Եղիազարյան, Արման Եղիազարյան, Արկաղի Եղիազարյան




1. նկուղ  
H=0.00-1.20  
h=2.25  
D=0.40  
d=0.35




Տարտ.=4.4քմ

2. Լիարկ  
hմիջ=2.20  
D=0.20




Տարտ.=33.6քմ

3. Լիարկ  
hմիջ=2.50  
D=0.15-0.20




Տարտ.=26.5քմ

4. Լիարկ  
h=2.50  
D=0.20-0.40




Տարտ.=244.0քմ

1. Լիարկ  
h=2.70  
D=0.40  
d=0.10-0.20



Տարտ.=16.7քմ

5. Լիարկ  
h=2.50  
D=0.20-0.40



Տարտ.=46.0քմ

6. Լիարկ  
h=2.50  
D=0.20-0.40

Լրացուցիչ նշումներ.

Մասշտաբ 1:200

Որակավորում ունեցող անձ		Մանվել Դուկասյան
Որակավորման վկայականի համարը		0046
Ստորագրություն		<i>[Signature]</i>
Իրավաբանական անձի անվանումը		«ԳԻՍ-ԱՌՏ» ՍՊԸ
ՀՎՀՀ		03582649
Ստորագրություն		<i>[Signature]</i>
ամիս	չափագրության	12.12.2023
ամսաթիվ	հատակագծի կազմման	20.12.2023



**ՇՐՈՒՄԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

Մարզ Կոտայք, համայնք Արվյան գյուղ Գեղաշեն բնակելի տուն

Մարզ, համայնք, հասցե

1	2	3	4	5	6		7	8	9	10	11-14				15-18				19-27								28-34							
					Նախնական	Օրինական					Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	Սահմանափակ	
1	Բնակելի	Բնակելի տուն	նկուղ	1	1	31.25	2.25	70.31	2020	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34
1	Բնակելի	Բնակելի տուն	1	1	127.65	2.70	344.66	2020	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	
1	Բնակելի	Բնակելի տուն p/պ կամ ա/հ	1	1	44.20			2020	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	
2	Բնակելի	գուգարան	1	1	2.85	2.20	6.27	2018	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	
3	Բնակելի	թոնրատուն	1	1	30.90	2.50	77.25	2014	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	
4	Բնակելի	խորանոց	1	1	22.20	2.50	55.50	2014	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	
5	Բնակելի	հավարուն	1	1	13.60	2.50	34.00	2014	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	
6	Բնակելի	Օժանդակ շինություն	1	1	37.80	2.50	94.50	2014	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	
7	Բնակելի	պարիսպ			0.50	1.70	0.85	2018	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	

Շինությունների ընդհանուր մակերեսը (քմ)	Այդ թվում
Օրինական կառուցված (քմ)	Ինքնակամ կառուցված (քմ)
36	37

310.95		310.95
--------	--	--------



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մարտի 2024 թվականի N 1360

ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Արովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով Սերյոժա Սարգսյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 27-ի N Բ-1416)։

1. Արովյան համայնքի Գեղաշեն գյուղում գտնվող անշարժ գույքին (հիմք՝ 2024 թվականի փետրվարի 23-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված Հայաստանի Հանրապետության «Կոտայքի մարզ» նոտարական տարածքի նոտարի գրանցամատյանում N 1617) տրամադրել հասցե՝ համայնք Արովյան, գյուղ Գեղաշեն, 2-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 8/2:

2. Սերյոժա Սարգսյանը պարտավոր է Արովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սերյոժա Սարգսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. մարտի 18  
ք. Արովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18 մարտի 2024 թվականի N 1361

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-034-0002-0005  
ԿԱԴԱՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Արմվյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 197-Ն որոշման, հաշվի առնելով «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության 2024 թվականի փետրվարի 28-ի N ՎՆ-ՇԹ-530 (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 29-ի N Տ-436) գրությունը.

1. Համաձայնություն տալ «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանն Արմվյան համայնքի Կաթնաղբյուր գյուղում գտնվող 07-034-0002-0005 կադաստրային ծածկագրով Գայանե Հարությունյանին պատկանող տարածքի 0.22 կՎ հզորությամբ էլեկտրամատակարարման գիծը նախագծել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված N 98209111 (10725-ԷՄ) տեխնիկական պայմանի ուղեգծով և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել էլեկտրամատակարարման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է Արմվյանի համայնքապետարանի 900105215256 հաշվեհամարին մուծել 3 000 (երեք հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը և այլ շահագրգիռ կազմակերպություններին:

4. Քանդված հատվածները վերականգնել տասնհինգօրյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ԲԱԲԱՅԱՆ



2024թ. մարտի 18  
ք. Արմվյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅՆՏՎՈՒԹՅՈՒՆ N ԷԼ-35

«18» մարտի 2024թ.

Տրված է կառուցապատող «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐՈԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ -ին՝

իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման

ՀՀ Կոտայքի մարզ, Աբովյան համայնք գ. Կաթնաղբյուր (կադաստրային ծածկագիր 07-034-0002-0005)

0.22 կՎ հզորությամբ էլեկտրամատակարարման օբյեկտի

(օբյեկտի անվանումը, հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

կառուցման արդիականացման աշխատանքների կատարման համար:

1. Գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (արդիականացման) հետագիծ-նախագծային փաստաթղթերը մշակվել են «Աշխատանքային նախագիծ»

(նախագծային փաստաթղթերի փուլը)

«ՎՈՒԽՈՍ նախագծային ինստիտուտ» ՓԲԸ կողմից:

նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել 12 ամսվա ընթացքում:

(Էջի շինարարության նորմատիվային տևողությունը)

3. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Է. ԲԱԲՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՔՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

18 մարտի 2024 թվականի N 1362

**ԷԴՎԱՐԴ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՏՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ  
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հաշվի առնելով Էդվարդ Սիմոնյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մարտի 13-ի N Բ-1840)։

1. Էդվարդ Սիմոնյանին Աբովյան համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի մարտի 23-ի N 289 որոշմամբ տրված N 16 շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգել համաձայն ներկայացված ժամանակացույցի (կցվում է)՝ մինչև 2025 թվականի մարտի 23-ը։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Էդվարդ Սիմոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Է. ԲԱԲԱՅԱՆ

2024թ. մարտի 18  
ք. Աբովյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԴՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մարտի 2024 թվականի N 1363

ԷԴՈՒԱՐԴ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ ՔՐԻՍՏԻՆԵ ՀՈՒՆԱՆՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Էդուարդ Խաչատրյանի հայտը (մուտք՝ 2024 թվականի մարտի 12-ի N Ք-1806).

